


296

6 I. 3




ՏՆՕՐԷՆ-ՆՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պալատ Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԲԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԷՐՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Նկարչութի համար տրեկն. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օստրեկիներ տրեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեանն ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՄԵՐ ՈՒՂԵԳԻԾԸ

Եզրիպտոսի մէջ հայերէն թերթ մը ու-
նենալու փափաքը նոր չէ. անոր գոհացում
տալու կրկին փորձեր եղած են անցեալին մէջ,
առաջին անգամ հրատարակուելով Արմաւե-
նին ու երկրորդ անգամ՝ Նեղոսը, առանց
երկարատեւ կեանք մը ունենալու դժբաղ-
դաբար:

Այս պէտքը ու փափաքը շերտապէս չեղ-
ուեցան Ազգայնագրից ու Գահիրէի ազգային-
ներու կողմէ, 1896ի վերջերս, երբ Վատիքի
ափերէն խոյս տուող հայ գաղթականներու
մէջ մասն իրեն բնականաւոր ընտրեց Փարա-
ւոններու հիւրընկալ երկիրը և անոնց մէջ
գտնուեցան օրագրողներ որոնք իրենց նախա-
փորձերը կատարած էին արդէն Պալատ հայ
մամուլին մէջ: Կամքը ու եռանդը չէր որ
պակսեցաւ Փարոսի հիմադրիչներուն, եթէ
այսօր միայն, վեց ամիս ետքը, կարելի կ'ըլլայ
իրագործել այդ խորհուրդը զոր ընդգրկեցին
առաջին վայրկեանէն ու սրտանց, այլ միջոցներ
և դիւրութիւն: Պէտք չի կայ ըստատրելու թէ
այս սպասումն ընծայեց դիւրութիւն. կը բա-
ւէ որ ինքնօգնութեան պղտիկ ճիգ մը և հա-
մեստ տպարանով մը շատանալու համակեր-
պութիւնը իրականութիւն տուին մեր խաւա-
րին: Այսքանն ալ, անցողակի, արդարացունե-
լու համար թերթին ներք ծաւալն ու ապա-
գրական թերթութիւնները զորս ընդարձակել
ու կատարելագործել ո'չ միայն պարտակա-
նութիւն կը սեպենք, այլ և ճաշակի ինքիւր,
փտահեղով՝ փոխարքանալով հասարակու-
թեան քաջալերանքին վրայ:

Թէ ի՞նչ է Փարոսի ծրագիրը և ի՞նչ
պիտի ըլլայ իր ուղղութիւնը, երկար տեսու-
թիւններ պարզելու հարկ չենք տեսներ, ա-
ւանդական դարձած ոճով ու ձեւերով. ազ-
գային, գրական ու քաղաքական լրագրի սահ-
մանին մէջ՝ գրել, առաջարկել ու պաշտ-
պանել ինչ որ օգտակար կը դատենք ազ-
գին շահերուն, անկախ մնալ միշտ ո'ր և է
անձնական նկատումէ ու ազդեցութենէ, չի
ծառայել կուսակցական վեճերու, ահա՛ եր-
կու բառով, մեր հետեւելիք ուղղութիւնը:
Գալով ծրագրին, մասնաւորապէս եզրիպտո-
սի հայերու յատուկ թերթ մը ըլլալով, որ
բնականաբար զարկ մը պիտի տայ անոնց
գրական ճաշակին, ընդհանրապէս զբաղիլ

ամեն հայաբնակ կեդրոններու ազգային գո-
ծերով, բան մը որուն մեծապէս պիտի նպաս-
տեն թղթակիցներ ու աշխատակիցներ, որոնց
աշակցութեան վրայ կը վստահինք աշխարհ:

Մեր առաջին քայլերուն մէջ կրնայ ըլլալ
որ լիովին գոհացում չի գտնէ այս ծրագիր որ
ժամանակի կը կարծուի մինչեւ որ Փարոսը
երթայ մուտ գտնել հեռաւոր երկիրներու հայ
գաղութներուն մէջ, բայց ժամանակը, յա-
րատեւութեան ոգին ու հանրութեան օգ-
տակար ըլլալու փափաքը պիտի հարթեն ա-
մեն դժուարութիւն:

Բիշ մը բարեացակամութիւն ընթերցող-
ներուն կողմէ, ու շատ աշխատութիւն մեր
կողմէ, ահա՛ ինչ որ կը սպասենք ու կը խոս-
տանանք:

Այս հաւատքով կը ձեռնարկենք Փարոսի
հրատարակութեան, անոր անդրանիկ թիւը
ներկայացնելով իրեն հիմնադրող եզրիպտա-
հայոց յատուկ բարոյական համեստ շէնքի մը,
որուն շուրջ կրնան ծագում առնել ինչպէս
համակրութիւններ նոյնպէս ալ հակառակու-
թիւններ. այս երկու ներհակ զգացումներուն
մէջ ալ մենք կը գտնենք խթան մը յառաջ-
դիմութեան, միակ բանը ուսկից կը խորշնք
և պէտք է խոստովանիլ՝ կը վախճանք, ան-
տարբերութիւնն է:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Պատերազմ, զինադադար ու հաշտութեան
յոյսեր, — երեք մեկանց կը կազմեն օր-
ուան խնդիրը այն միջոցին ուր կը գրեմք
մեր առաջին «այժմեաթիւնը»: Ու ո'չ մեկը
դեռ իրականութիւն չած է կատարելապէս:
Երբ մեկ կողմէն հեռագիրներ կը ծանու-
ցանեն զինադադարի ընդունելութիւնը քուր
կառավարութեան կողմէ, Չարին միջամտ-
ութեամբ, միւս կողմէ կը շուրջնալ սակաւին
վերջին ճակատամարտին արձագանգները,
օրա յետեւներու փոփոխութիւնը որ հեղ-
շէն զօրաբանակին օգնութեան գացած էր:
Եւ միեւնոյն ժամանակ, Բարիդի մէջ դեւ-
պանախորհուրդի մը գումարման գրոյցները՝
հաշտութեան կնիքն են համար:

Հետաքրքրութիւնը զոր մեմք՝ հայերս՝
ունեցանք այս պատերազմին առթիւ եւ պիտի
ունենանք դեպքանախորհուրդին առթիւ, երբ
գումարուի, տեղագրի ու յաղթի քան մը

ունի իր մէջ: Լուռ համակամութեամբ մը
հանդիսասէս կըսնիք եւրոպական դիւանա-
գիտութեան անխղճութիւններուն, ազատ-
ութեան համար ցուրդներու պարտութեան եւ
բիւրս ուժի յաղթանակին: Ու հիմալ որ ժա-
մանակը երբեք հասած է «կանաչ սեղան»ին
վրայ դնելու կրեակաւն եւ հեղեղեակաւն
հարցը, որմէ օգտուելու յաւակնութիւններ
կ'ունենան միմյնի իսկ Պոլիսի, Դարա-
սայ ու Սերպիա, իրենց ալ իրենց պզտիկ
վեճերը կարգադրելու եւ կարգ մը նոր իրա-
ւասութիւններ ձեռք բերելու համար, — իբր
թէ հարսահաւորած ու վնասուած ժողո-
վուրդներ եղած ըլլային, — իրաւունք չու-
նի՞նք գոնէ մեկ մեզի հարցունելու — «հա-
պա մե՞նք...»:

ՔՐՕՆԻԿ

«Այս բարեգործն բարձունքն քառասուն դարեր
ձեւ կը նային»:

Կարճահասակ մեծ մարդուն ասիք գրեթէ
հարիւր տարի առաջ արտասանած այդ բառերը
չեմ գիտեր ինչո՞ւ միտքս կ'ուզան այն պահուն
որ գրեյս ձեռք տալով, առաջին անգամ ըլլալով
եզրիպտական հրատարակիչ վրայ նետել կը փորձեմ
... կողմադրեալ ամբողջ մեղքը:

Եզրիպտական հրատարակիչ — հայ լրագրութեան
համար — կուստիան խորհրդաւորութիւն մը ունի
որ հակառակ բանիցս եղած փորձերուն՝ չէ ուզած
մերձեցողներուն ափին մէջ խողով իր նայնջնիկ
ծաղիկը — պարսպայ մը որ տարօրինակ կերպով
զարմանալի է փարսաններու այս երկրին համար —
և այն օրհասն ուր մենք զմեզ ուրիշներէ տեղի յան-
գուցն կը կարծենք անոր ժողովարար, սկսածայ գողեր
կ'զգանք, գողեր՝ որ իրենց դատութեան մէջ
չգիտեմք ինչ մը ունին անուշ:

Երեւոյթը ընական է՝ որովհետեւ եզրիպտոսի հայ
գաղթականութեան մէջ թերթի մը կարեւորութիւնը
չի հասկցողները խաւա շատ են, իսկ անոնք որ կը
հասկնան... շատ խիտտ:

Եւ խնդիրը երկու դասակարգին ալ հաճելի
ըլլալու մէջն է:

* * *

Երկիր մը ուր նախարարներ, բարձր պաշտօնեա-
ներ, փառանք, պէյեր ունին, երկիր մը ուր եկած է
հաստատուել հայ սեզանաւորը, արուեստագէտը,
վաճառականը, գաղտնաբերը, գրագէտը, խանութպանը,
գերատանը, գործարարը, վաճառատուն և հասարակ
(պատճառը և արդիւնքը) վարդապետը, քահանան,
գրասէրը ինչ, բախտախնդիրը, գաղթականը, և
որովայնապաղով փորը կշտուցողը (le ventre pour
le ventre), երկիր մը վերջապէս որ եթէ իր կա-
րեւորութիւնը չունենար՝ յաւէտ ուխտագնացն
Այվազեան տարին անգամ մը չէր հանդիպեր, ահա՛
ասանկ երկրի մը մէջ թերթ մը կը պակսէր, և

երբ այդ պահանջը լրացնելու համար մեր ձեռքը գտնուած նեղ միջոցներով «Փարոս»ը կը հաստատենք, օգտակար գործ մը ըրած ըլլալու գոհունակութիւնը ունինք, գոհունակութիւն մը որուն առջեւ մեր ամեն գոհալիցութիւնները կը մոռցուին և որ իրաւունք կուտայ մեզ ասպարէզին նայելու յուսովի:

* * *

Այսպէս... ահա թաւ մը որ անշուշտ վերջին ծայր կը հետաքրքրէ Նեղոսի ափերուն վրայ և եկեղեցեաց բակերուն մէջ տառապող մեր սիրելի գաղթականները:

Շատ ծիծաղելի պիտի ըլլար պարզ բրօնիկազրի մը համար գիւտնադէտի հովեր առնել և պատասխան մը տալ կենսական այդ մեծ հարցին, հարց մը որով այս պահուս կզբաղին Գեղամիոյ կայսրը, մեր անկիւնի նախարարաւորը, Պ. Հանօթօ և արապ իշապանը:

Իրաւ է որ Վիլհելմ կայսրը և պախալ Նիքոլին միեւնոյն ակնկալութիւնը չունին ասպարէզին, իշապանը և Պ. Հանօթօ միեւնոյն չափերով կապուած չեն անոր ինչպէս նաեւ հայ գաղթականը որ իր հաշիւը ունի անոր հետ:

Երկուստեք ինքնակալը գերիշխանութիւն մը կերպէ Եւրոպայի մէջ, Յոյն նախարարաւորը կրեւորէ Երկրորդի թագաւորութեան համար, քէ տ'Օսմէի մարզը... մեծ ներքինատեւտի պաշտօն մը և արապ իշապանը 1882ի տակնաւորոյութեանցիրիսութիւն մը:

Իսկ հայը, իրենները կերպէ, կերպէ իր տունը, տեղը, բարեկամները, իր թաղին սրճարանը, գործը, հանգիստը և իր սովորութիւնները, կերպէ երջանկութիւն, խաղաղութիւն, և ասպարէզութիւն իր եղբայրներուն, արիւնակիցներուն համար, առանց մոռնալու Պօլսոյ չալուս իւզիւմիւն, երակը, Կէօք թէփէի ջուրը, Դալաթիոյ եկեղեցին, Վոսիորի չողենաւները, որոնց ամենքն ալ իր երազներուն մէջ տեղ ունին և որոնց ամբողջութիւնով կը կազմէ իր կարօտախտը:

Կարելի է որ այս անպիտան դարաւերջին մէջ մեր իշխանը, մեր երազները չիրականանան և նուազ իրաւունք ունեցողները վարձատրուին. բայց չպիտի ըսուի թէ օրինաւոր չեն մեր պահանջները, մեր երազները անիրագործելի և մեր փափաքները սուրբ և անկեղծ:

Ռուսոյ ջարդը, Վիլհելմի, և մեր էն յետին բեռնակիրը միեւնոյն Աստուածը ատեղծած է, ուստի յուսահատելու տեղի չիկայ:

Յ. Ա.

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտոսի ալգ. երեսփոխանական ժողովը կրկին նիստեր ունեցաւ չարթուս մէջ, առաջինը չորեքշաբթի և երկրորդը՝ երէկ, ուրբաթ:

Օրակարգի գլխաւոր խնդիրն էր՝ ասկից առաջ ժողովին կողմէ քուէարկուած կանոնագրին մէջ բարեփոխման կարօտ տեսնուած քանի մը կէտերու քննութիւնը որուն վրայ երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան չորեքշաբթիի նստին մէջ որ տեւեց մինչեւ գիշերուան ժամ 9 1/2: Յաւանական էր որ Վիլհելմի և Նիւմանը խօսելու այդ կանոնագրին վրայ: Փութանը ըսել միայն թէ Եկեղեցեաց Հոգաբարձութիւնն ինչպէս նաեւ Մարմինայի գերեզմանատան Հոգաբարձութիւնը համախառն գլխաւորեցան այն բարեփոխումներուն որոնք կը պաշտպանուէին կրօնական նախնաւորներու թեան և աղքատներու իրաւունքին պաշտպանութեան տեսակէտով:

Երէկուան նիստին մէջ, կարգացուեցաւ առաջնորդական տեղապահ Տ. Կարապետ քահանայի հրաժարականը զոր ներկայացուցած էր իր ծերութեան ու տկարութեան պատճառաւ: Ժողովն ընդունեց այդ հրաժարականը,

չնորհակալութիւն յայտնելով ծերունի քահանային երկարամեայ պաշտօնավարութեանն համար և որոշելով հանգստեան թոշակ յատկացունել անոր ցկեանաւ:

Յետոյ Դիւանի առաջարկութեամբ և երեսփոխանայ համամտութեամբ ձեռնարկուեցաւ առաջնորդական տեղապահի ընտրութեան, որպէս զի վարչական ժողովները զուրկ չի մնան հոգեւոր պետի մը նախագահութենէն որ կը մարմնացունէ Առաջնորդարանի գործադիր իշխանութիւնը:

Ժողովը՝ Կրօնական և Քաղաքական Ժողովոց անդամներուն կարծիքն եւս առնելէ ետք՝ միաձայնութեամբ առաջնորդական տեղապահ ընտրեց Տ. Յակոբ Աշոտ Մ. վարդապետ Փափաղեանը որ իբրեւ հիւր Գահիրէ կը գտնուի չորս ամսէ ի վեր:

* * *

Գրիգոր Էֆ. Եղիայեան որ նոր կանոնագրին համաձայն Քաղաքական Ժողովին մօտ խորհրդատու ընտրուած էր կալուածական և գաւառական գործոց համար, և միանգամայն տեսուչ նոր կանոնագրի գործադրութեան, Եւրոպա երթալու վրայ ըլլալով, ժողովն առաջին փոխանորդ կարգեց իր գերատեսնապետը՝ Միհրան Էֆ. Մելիքեան:

Յաջորդ թուով կը հրատարակեն նորընտիր չորս Հոգաբարձութեանց վերջնական կազմակերպութիւնը:

Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

Հայ Հռոմէականաց Պատրիարքին երէց եղբայր, Արիստակէս Էֆ. Աղաբեան, որ ճըմբան եղանակը եգիպտոս անցուցած էր իր զաւկըներով, չարթուս սկիզբը Թրիէսթէի ճամբով Եւրոպա ուղևորած պահուն Լոյսի չողենաւին մէջ յանկարծամահ եղաւ: Հանգուցեալը Պօլսոյ առեւտրական ու սեղանաւորական հրապարակին վրայ ծանօթ ու յարգելի ըլլալէ զատ՝ իբրեւ Աղաբեան տան պետը, ազգային շրջանակի մէջ ալ խզճամիտ կատարող մը եղած էր իր բարեգործական պարտականութիւններուն, աղէտի ու թշուառութեան օրերու մէջ իր օժանդակութեան բաժինը նուիրելով անձայն, անչլուկ, ձախ ձեռքին իսկ չի գիտցունելով ինչ որ աջը կուտար: Մէկէ աւելի տխուր պարագաներու մէջ՝ բազմաթիւ կարօտեալներ օգտուած են իր առատաձեռնութիւններէն, առանց իմանալու իրենց բարերարին անունը որ ծածկուած կը մնար: Աղաբեան Էֆ. Հաճընի մէջ իր ծախքով կը պահէր երկսեռ վարժարան մը:

* * *

Նախորդ չարթուն, Պօլիս, փաստաբանի մը գրասենեակին մէջ պարսկի մը հրազենի հարուածին զոհ գացող երկու հայ վաճառականներէն մէկը, Մանուէլ Մանուէլեան, քեռորդին էր՝ քաղաքի ծանօթ ազգայիններէն Բարթիկ Էֆ. Նահապետեանին որուն կը յայտնենք մեր ցաւակցութիւնը:

Ա. Զ. Դ

Ամեն անոնք՝ որոց մը թերթը կը զրկուի և որ առաջին երկու թիւերը մեզ չ'են վերադարձներ, իբրեւ բաժանորդ պիտի նկատուին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր. Խաիլը, որ ի մօտոյ Կ. Պօլիս պիտի ուղևորի, մեկնելէ առաջ Գահիրէ պիտի գայ քանի մը օր անցունել Գուպպէի պալատը:

— Յաւանական երկուշաբթի, Անգլիոյ Թագուհւոյն ծննդեան 78րդ տարեդարձին առթիւ, անգլ. գաղթականութեան շնորհաւորական այցելութիւնները պիտի ընդունուին հիւպատոսարանին մէջ: Միջօրէէն յետոյ, Լորտ Բրոմըր ներկայ պիտի գտնուի անգլիական բանակին կողմէ կատարուելիք զօրահանգէսին որ տեղի տիտի ունենայ Ապոլինի հրապարակը զօրապետ Քէննէթ Հէնտերսընի հրամանատարութեան տակ: Գիշերը Լորտ Բրոմըրի կողմէ սեղան մը պիտի տրուի:

— Թէեւ Բրօկրէ ծանուցած էր թէ Պօլսոյ փաշա Նուպար երէկ Աղեքսանդրիայէն մեկնած է Մէսսաթըրիի չողենաւով ի Մարսէյ, սակայն կ'իմանանք թէ Ն. Վսեմութիւնը յառաջիկայ ուրբաթ միայն պիտի մեկնի ընտանեօք, իր ամուսնային արձակուրդը Եւրոպա անցունելու համար:

— Կ'ըսուի թէ առողջապահական վարչութեան գերտեսնօրէն Մահմուտ Սրտգը փաշա Սիւէդի շրանքին կառավարիչ պիտի անուանուի և իրեն պիտի յաջորդէ բժշկական վարժարանի տեսնօրէն Տօրթ. Իպրահիմ Հասան փաշա:

ՎԵՐՋԻՆ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԲԱՐԻՉ, 21 մայիս. — Ամբողջ ֆրանսական մասուր յոյս կը յայտնէ թէ հաշտութիւնը մօտաւոր է, մեծ Տէրութիւնները համաձայնած ըլլալով գլխաւոր կէտերուն վրայ:

ՀԱՆՆԱ, 21 մայիս. — Կրէտէ գտնուող հելլենական բոլոր զօրագունները մեկնեցան կղզիէն (Հալլաս)

ԱԹԵՆ, 21 մայիս. — Կերեւայ որ թուրք զինւորներու հարածանքը պատճառ եղած է հելլենական բանակին ցիր ու ցան ըլլալուն. միայն օտար լէզոնն է որ ընդգրկուած մը ըրած է: Հելլենները Թէր. մօփիէ ապստանեցան ուր Սպարտայի դուքսը վերջնապէս հաստատեց իր սպայակոյտը:

Որքան որ Սուլթանը հեռագրած էր Լոնտէ՛մ փաշային՝ յարձակումը դադրեցունել, բայց հալածողները շարունակեցին զայն մենչեւ չորեքշաբթի կէս օրէն վերջ:

ՀԱՆՆԱ, 21 մայիս. — Իսլամներուն և քրիստոնէայիներուն միջեւ խռովութիւնները վերականգնուին իրենց սովորական վիճակին: Յոյները յարձակեցան Նէսքն տեղակալին վրայ զոր կողով տեղին Սուտայի ներքերը: Իսլամները զենք պարպեցին անգլիացի և ֆրանսացի ծովականներուն վրայ որոնք կը պտտէին Սուտայի փողոցներուն մէջ: (Ռիւդէր)

Ինչպէս կ'երեւի այսօրուան հեռագիրներէն, հելլենական զինուորը զօրքերն հաղիւ կրէտէն մեկնած՝ նորէն խռովութիւնը սկսան կղզիին մէջ, և այս անգամ աւելի լուրջ կերպով: Ու՛ր մնաց Տէրութիւններուն խոստումը թէ զնդապետ Վաստա թո՛ղ իրեններով հեռանայ կղզիէն որպէս զի կարելի ըլլայ ինքնօրինութիւն և բարեկարգութիւն հաստատել տալ:

Նոր յարձակումները ծովականներուն կ'ուղղուին. արդեօք կրնա՞նք այս երեւոյթը բարեգուշակ համարիլ: Երբեմն ամիրայի մը մատին ծայրէն վազած քանի մը կաթիլ արիւնը հարկւր հաղարներով ջարդուած խեղճ արարածներու արիւնէն աւելի կը յուզէ եւրոպացի գիւնազէտներու սիրտը... Եթէ երբեք ունին:

ԻՆՉ ԲԱՆ ԿՈՒՏՈՒԻ

(ՖԱՆԹԵԶԻ)

Մարդ չկայ աշխարհիս վրայ որ բան մը չուտէ։ Այս կանոնին բացառութիւններն են Սուշի, Մէլաթի և . . . ամեն ճշմարիտ արուեստագէտ որ Հայ ծնած է։

Եթէ ուտուելիք բան միայն կերակուրը ըլլար, այս յօդուածը գրեւոր պէտքը չպիտի գտայինք, եկեւ տես որ ակառայի տակ գրուելիք շատ մը բաներ կան որ ոչ պիտի թեր են և ոչ ալ մաքարօնի։

Օրինակի համար օրդին իր հօրը ժառանգութիւնը կ'ուտէ։

Թողովախօսը կուտէ . . . իր բառերուն կէսը։ Հարս ու կեսուր գիրար կ'ուտեն և զգայուն մարդը . . . ինքզինքը։

Խղճամիտ պարտատէրը իր արհամարհանքին իր բառերը կ'ուտէ։

Բանաստեղծները իմ և ձեր միտը կ'ուտեն։ Աշխարհիս ամեն թաղականները քիչ շատ եկեղեցւոյն եկամուտները կ'ուտեն . . . գոնէ ժողովուրդը այսպէս կը կարծէ։

Շատ բաղդը կ'ուտէ . . . ոտքին տալանը։ Տղաքը ծեծ կ'ուտեն, մեծեր ալ կան ճիշտ տըղոց պէս։

Ահագին լէգէոն կը կազմեն անոնք՝ որ կ'ուտեն . . . նստած տուններուն վարձքը։

Դատը կորսնցնողը միտը մը կ'ուտէ և շարազորները բանի մ'ամսուան բանտարկութիւն։

Եւ ո՞վ է այն որ կեանքին մէջ երբէր չափ մը չէ կերած։

Հապա՜ կաշառք ուտողները։

Անբերանները իրենց ամօթը կ'ուտեն և Հրեայի Կեստ գործ ունեցողները անպատճառ խաղըստ մը։

Հայրեր կան որ կը սնդեն թէ զաւակին տառն և հինգ օրը անգամ մը զոյգ մը կօշիկ կ'ուտէ։

Չոր մարդիկ իրենց թշնամին կ'ուտեն տըղով։ Կիներ ալ կան որ փոխանակ չէնքով շնորհքով կենալու, երբեմն անանկ խալքեք կ'ուտեն որ . . .

Ամեն օր կը տեսնանք ասոր անոր հախը և իր եղունգները ուտող մարդիկ։

Իսկ եթէ բան մը կայ որ չէինք ուզեր որ ուտեն, այն ալ մեր բաժանորդագիրն է։

ԹԱՏԱՄԵՍ

ԻՆՆԵՆԱԿԱՆ ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ

Շատեր հետաքրքիր են գիտնալու թէ ինչպէ՛ս հեղինական կառավարութիւնը կրցաւ գիտնալ ներկայ պատերազմին ծախուց։

Պատերազմը սկսուած պահուն կառավարութիւնը 15 միլիոն արախմի ունէր զոր գործածեց նախնական պէտքերուն համար։ Այժմ պիտի տեսնենք թէ մնացեալը ինչ միջոցներով հայթայթուած է։

Նախ ի նկատի առնելու է այն հանգաւանակութիւնը որ նոյն իսկ Յունաստանի մէջ կատարուեցաւ ամենէն մեծ գումարները այն թոյնները տուած են որոնք օտար երկիրներու մէջ հարստանալէ վերջը եկած են իրենց հայրենիքը հաստատուել։ Ասոնցմէ է Պ. Սինկրօս որ երկու միլիոնի գումար մը կառավարութեան տրամադրութեան տակ դրաւ։

Շատ մը կառավարական պաշտօնեաներ իրենց ամանակները նուիրեցին և շատեր իրենց ունեցածը չ'ունեցածը տուին կառավարութեան։

Գալով օտարաբնակ թոյն գաղութներուն, ասոնք գումարներուն մեծագոյնները տուին։

Մարտիկոյ մէջ շատ հարուստ թոյներ կան ինչպէս Տեարը Զարիֆի, Զաֆիրօքուլօ, Վալիանօ, Մէթաքսա որոնց ամեն մէկը 150էն 200 հազար ֆրանք տուին, ինչ որ 2 միլիոնի մօտ գումար մը ըսել է։

Եղիպատարի մէջ ամենէն մեծ գումարները հանգանակուած են։ Ալէքսօֆ 3 միլիոն ֆրանք տուաւ, Տեարը Սինաալինօ 200,000, Զէրվուտաքի, Սարվաիօ, Պէնաքի, 150 հազարական։ Վերջապէս ամբողջ Եղիպատարի մէջ հանգանակուածը 10 միլիոնի մօտ է։

Լօնտօնի, Լիվրպուլի, Մանչէսթըրի, Թրիֆթի և Լիվօռնոյի մէջ մեծ գումարներ ժողովուած են։ Մանչէսթըրի մէջ առաջին օրը հանգանակութիւնը 750,000 ֆրանքի բարձրացաւ։ Մինչեւ հիմայ կառավարութիւնը Անգլիայէն 3 միլիոն ֆրանք ստացած է և Փարիզէն 2 միլիոն։

Եւ մինչեւ այսօր ամեն թոյն ձեռքէն և կածը կ'ուղարկէ Արթէնը։

ԱՐՁԱԳԱՆԳ

ՎԱՆՐԱՄ ՍԵՎԱՃԵԱՆ

Լօնտօնէն մեզ կը գրեն.

Վահրամ Սեվաճեան, ծանօթ դաշնակաշարը, որ այնքան մեծ յաջողութիւն գտաւ Փարիզի և Զուրիցերիոյ մէջ, երկու մեծ նուագահանգէս կազմակերպած է որք տեղի պիտի ունենան ի Լօնտօն Սէնթ Ճէյմս Հոլլի մէջ Մայիս 18ին և յունիս 1ին։

Համակերելի արուեստագէտը բացի Շիլպերի, Շիւմանի, Եօրնի, Լիսթի, Չայքովսկիի, Ռիպինշթայնի, Կրիկի, Պիթօվէնի և Կօտարի գործերէն ալ տի գարնէ նաեւ իր հեղինակութիւններէն՝ Նալկական շատ մը նուագներ։

Անգլիական ռատանին բարձր դասուն պատկառնող բողբոջութիւն մը ներկայ պիտի դնուի այդ երկու նուագահանգէսներուն, հիանալու համար հայ — Բատէրէվսկիի տաղանդին վրայ։

Խմբագրութիւն իր բարեկամ Վահրամ Սեվաճեանի կատարեալ յաջողութիւն կը մաղթէ։

* * *

ՅՈՒՆԱՅ ԺԱՆՆ Տ'ԱՐՔԸ

Վերջին օրերս Բիրէէն մեկնող երեք հազար յոյն կամաւորաց զուգի մը զբօսակիրն է պեղանի հեղինակի մը, տասնութօթը տարեկան, Էլէնի փօն, թանթիմիտի, որ զինուորական համազօգտա կը կրէ, իր սեւ մազերը կիսովին ծածկած սիրուկ փոքրիկ գգակով մը որուն վրայ կը փայլի հեղինական գիւնանշանը։

Թիֆլիզ հաստատուած յոյն աստամարդի մը ազդիկն է Էլէնի որ Պաթումի մէջ հրայանած գութան դասեր տուած է ուստ սոյալէ մը։ Պատեւրազով դաշտին մէջ իրեն կ'ընկերանայ իր եղբայրը, ան ալ իրրեւ կամաւոր, և երկուքն ալ քաջաւարտ։

Ժողովուրդը խանդավառ ծափերով ողջունած է արիասիրտ հեղինակին ոգեւորիչ ներկայութիւնը։

* * *

ԴԱՐԱՎԵՐՋԻԿ ԱՃԱՊԱՐԱՆԸ

Թէ մինչեւ ո՛ւր կ'ընայ երթալ մարդկային եւ սասիրութիւնը, կամ լուս և ֆրանսական ետաթիւրութիւնը, — ինչ որ նոյն բանն ըսել չէ այս միջոցիս։

«Պաղաւ տը Շառլիթէ»ի Հրկիզուէն հազիւ շարաթ մը ետք, երբ աճիւնացած մարմիններու հետքեր դեռ կը մնային անձանայ ու ամբողջ Ֆրանս, սա սգաւոր կը հուշակէր ինքզինքը, զտնուցան բուրիզեան թերթեր, և առաջնակարգներէն, որոնք աւուանական օրէնսդրութեան փափուկ հարցեր հրապարակ նետեցին, — օրինակի համար՝ ամուսին մը ուրուն կինը անյայտ եղած ըլլայ Ժան Կուստի փողոցի հրդեհին մէջ, բայց դիտելը գտնուած չըլլայ ետքէն, կրնայ վերստին ամուսնանալ։

Եւ հիւստ իրաւագէտներ, ամենայն լրջութեամբ, Օրինադրութիւն թղթատելով, կը փութան պատասխանել մանրամասնօրէն պարզելով այս կամ այն յօդաւորը համանման պարագայներու յատուկ։

Այսչափ արտօրանքի պէտք կար։ Կ'երեւի թէ ֆրանսական ռատանին մէջ հազուադիւր չեն էրկիրեր որոնք չիալտի վարանէին օգտուել ասանկ աղետէ մը՝ նոր ամուսնութիւն մը կնքելու համար, առանց վայրկեան մը կորսնցնելու, վախճալով որ մի գուցէ իրենց «սիրակցորդը» հրաշքով մը երկան գոյ տաւրակներուն տակէն։ Եւ ասոնք ամենէն աւելի լայողներն են։

* * *

ԶԲՕՍԱԵՐՋԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԵՆ

Այս ձմեռ Եգիպտոս այցելող գրասարձիկներու թիւը նախորդ տարւանէն (1895—96) երկու հազար հօգի պակաս եղած է, ու վերջընթեր տարւանէն (1894—95) երեք հազար պակաս։ Ենթադրելով թէ իւրաքանչիւր գրասարձիկ առնուաղն 50 ոսկի ծախսէ երկրին մէջ, ուրեմն 100,000 ոսկիի պակաս առուստուր եղած է վերջապող ձմեռն ի Գահիթէ, առանց հաշուելու երկաթուղիի ու Նեղոսի վրայ նաւարկութեան ծախքերը. թողունք որ փոքր թիւ մը չեն կազմեր այն գրասարձիկներ որոնք քանի մը հազար ոսկիի գնում կ'ապարեւէ ետքը միայն կը մեկնին և որոնց համար 50 ոսկին գրական առօրեայ ծախք մըն է։ Այս կերպով, 100,000 ոսկիէն շատ աւելի պատկառելի գումարի մը կը հասնի «թուսիսթ»ական հատոյթներուն նուազումը։

Իրեւ տեղական առեւտուրին հետ ուղղակի առնչութիւն ունեցող պարագայ մը՝ շահեկան սեւ պեղներ վիճակագրական այս հսկիւրճ ծանօթութիւնը տալ թէ և մենք նախամեծար պիտի սեպէինք վիճակագրութիւն մը հրատարակել՝ այս ձմեռ Եգիպտոս եկող մեր աղքատիկ հայ գաղթականներու թիւին վրայ։

Մե՞րն է յանցանքը եթէ տաճարին չունեցանք վիճակագիր մը՝ այդ գաղթական շարժումի մասին։ Օր մը անշուշտ անոր ալ կարգը կուգայ։

Ծ Ի Ծ Ա Ղ

Կառապան մը Սուսմանին խաճուրը կերպայ եւ պաշտօնեային մօտեցալով՝ — կարեւորսի համար ալ ևնց ունի՞ք — կը հարցնէ։
— Շահ, կը պատասխանէ պաշտօնեան ձեր թիւը կրնա՞ք բտել։
— 1364։

* * *

Էֆսիկ տուտուն հարուստի մը տուեկն կը վերադառնայ։
— Բա, նա՞քը, կը հարցնէ ամուսինը, տուեկնին աղւոր շէկուած է։
— Հա՛ւ ամուս, ըսումին խրսար չի կայ . . . երկու ֆուր մեկ բիւնցի վրայ կը չալէին կոր։

Օսար երկիրներու մեջ գտնուող մեր բաժանորդներն իրենց բաժնեգիններ կրնան մեզ հասցնել «մանսա-փոսք»ով մը ուղղեալ առ՝

ARTIN ALPIAR

Directeur-Redacteur du Journal PAROS
Le CAIRE (EGYPTE)

«ՓԱՐՈՍ»-ի Աղեֆանդիկոյ գործակալութիւնը ըստանձնած է Տիար Միշրաւ Թէլեմս ուրուն դիմելու եւ բաժանորդագրութեանց եւ ծանուցմանց համար։

Գանիթի մեջ ՓԱՐՈՍը ձեռք կը ծախուի՝ Օթէրայի դիմ, փողոցի անկիւնի լրագրաւաճառին խանութը։

ՏՕՒԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ՝ կանանց, ստաֆուի, մորքի եւ ջղային հիւանդութեանց։ Կ'ընդունի իրեն դիմող հիւանդները Բանսիօն Ֆիլիք, Զօրի Բօնիֆան, քալի դիմ, ամեն օր առաւօտեան ժամը 10էն 11 եւ կեսօրէն վերջ 2էն 4։ Բոլոր վկայեալ աղբա՛հ ձի կը դարմանուին։

Le Gérant: HENRY SAKAKINI

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԱՐՈՒՄ ԵՒ ԱՂԵՔԱՆԳՐԻՄ

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԼԵ ՄԱՍԽՈՏԻ ԵՒ ՍԵՎԱԴՐԱՆԻ
ՄԵՍԻՍԳՈՅՆ ԳՈՐԺԱՐԱՆ

Ընդհանուր Միջոցառում «Շահա Ազգային»
Խառն Դասարաններու դիմ:

Ընթացիկ Գրքի Մեկնություններով

Սկիզբէն Ռուսերէն 1000 հաւար 2 1/2 Անգլ. ոսկի

»	Խառն	»	»	2	»	»
»	Պայտառական	»	»	1 1/2	»	»
»	Պոհնա	»	»	1 1/4	»	»
»	Նախնական	»	»	1	»	»
»	Ճոռ	»	»	20	Փրանք	

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՉՂԱՅԻՆ ՇԻՒՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ նորաբոյժ հիւանդներու համար,
կազմուիչ արտի, շնչառական գործարաններու, ար-
եան եւ ջղային հիւանդութիւններու:

Կը յանձնարարուի հեծելանիւ գործածողներուն:
Սխալները դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մքերանոց. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱՒ ԱՆԿՐՈ—
Եզրկայական դեղարանը Էզրկէի, Գահիրէ:

ՀԱՄՄԱՄ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

ՀԱՄՄ ՓԱՏԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ, ՍԲԼԱՆՏԻՑ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՑ Է

Էրիկ մարդոց համար առաւօտեան ժամը 7էն 10
և իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:
Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ
կէս օր:

Ուրբաթ եւ կիրակի օրերը միմիայն Էրիկ մարդոց համար
կիրակի և տօն օրերը ՀԱՄՄԱՄԸ կէս օրէն վերջ
գաց Է:

ԳՈՒՅՏԻ ՅՈՆՍԻԷ ԵԳԻՊՏԱԿԱՆ

144^ր ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

15 Մայիս 1897

267,297 քիւր կը շահի 50,000 Ֆրանկ:

Հետեւեալ 25 թիւերը 1000ական ֆրանք կը
շահին:

47,624	98,750	183,158	308,958
53,294	99,169	216,911	322,439
63,968	118,576	220,024	329,327
69,078	143,551	251,596	339,879
75,169	177,865	270,800	361,110
90,596	181,756	301,241	365,606

385,047

Շահող թիւերուն վճարումը տեղի պիտի ու-
նենայ 1897 Յունիս 1ին:

Տ Պ Ա Ր Ա Ն
ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԷ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՅՈՒՅՈՒՅԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եզրկայական օր և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնա-
մօք և փութով կը կատարուին:

Վայրկենական սպազորութիւն այցեֆարսերու եւ տոներու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերէ առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյեան 7:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ՃԱՄԱՀԱՆԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԱՐՈՒՄ ԱՂԵՔԱՆԳՐԻՄ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Սմիխ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Սմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Սմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Սմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.
Գահիրէ	առտ. 4 45	—	7 —	8 15	9 30	էրեկ. 3 30	էրեկ. 4 45	էրեկ. 7 15	էրեկ. 11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	էրեկ. 4 47	էրեկ. 5 29	էրեկ. 8 32	էրեկ. 12 35
Թանթա	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	էրեկ. 5 45	էրեկ. 6 7	էրեկ. 9 30	էրեկ. 1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	էրեկ. 6 26	էրեկ. 6 11	էրեկ. —	էրեկ. 1 54
Տամանհար	» էրեկոյ 3 10	7 34	9 41	12 49	11 58	էրեկ. 7 59	էրեկ. 7 7	էրեկ. —	էրեկ. 3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	էրեկոյ 1 —	էրեկ. 9 40	էրեկ. 8 7	էրեկ. —	էրեկ. 5 50

ԱՂԵՔԱՆԳՐԻՄԻՑ ԳԱՀԱՐՈՒՄ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Սմիխ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Սմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Խառն առտ.	Սմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Սմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.
Աղեքսանդրիա	առտ. —	առտ. 7 —	առտ. 7 15	առտ. 9 —	առտ. 9 20	էրեկ. 2 30	էրեկ. 4 15	էրեկ. 6 15	էրեկ. 11 —
Տամանհար	» —	» 8 6	» 8 58	» 10 2	» 12 14	էրեկ. 4 13	էրեկ. 5 15	էրեկ. 8 6	էրեկ. 1 9
Թանթա	ժամ. —	» 9 12	» 10 28	» 11 —	» 2 39	էրեկ. 5 43	էրեկ. 6 10	էրեկ. 9 40	էրեկ. 2 56
	մեկ. 6 15	» 9 16	» 11 20	» 11 5	» 2 49	էրեկ. 6 30	էրեկ. 6 14	էրեկ. —	էրեկ. 3 6
Պէնհա	մեկ. 7 18	» 9 59	» 12 23	» 11 46	» 4 43	էրեկ. 7 33	էրեկ. 6 52	էրեկ. —	էրեկ. 4 25
Գահիրէ	ժամ. 8 30	» 10 45	» 1 35	» 12 30	» 6 25	էրեկ. 8 45	էրեկ. 7 35	էրեկ. —	էրեկ. 5 50

ԳԱՀԱՐՈՒՄ-ՍԻՒԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻՒԷՋ-ԳԱՀԱՐՈՒՄ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւլզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	էրեկոյ 12 28	7 48	» կայարան	» —	3 30
	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Ջակաղիկ	ժամ. 1 34	8 54	Ջակաղիկ	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
Սիւլզ կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35